# 2017թ. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2017թ. ՀՀ ներքին քաղաքական կյանքը լի էր բազում զարգացումներով:

Առաջին հերթին կարևոր է նշել խորհրդարանական ընտրությունները, որին մասնակցած քաղաքական ուժերից միայն չորսին հաջողվեց հաղթահարել ընտրական շեմը և ապահովել ներկայություն օրենսդիր մարմնում: Խորհրդարանական ընտրություններում նախընտրական խոսույթը բավական բազմազան և ուշագրավ էր: Տարբեր քաղաքական ուժեր, հավատարիմ մնալով իրենց նախընտրական ծրագրերին, առաջարկում էին հայ հասարակության և պետության զարգացման իրենց տեսլականը: Առաջարկվող ծրագրերը շատ առումներով իրար կրկնում էին, սակայն տարբերվում էին ոլորտային և խնդրակարգային շեշտադրումներով: Նմանությունները հիմնականում պայմանավորված էին ներքին սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման պատրաստակամությամբ, իսկ տարբերությունները հիմնականում վերաբերում էին արտաքին քաղաքականությանը (Արցախյան խնդիր, ԵԱՏՄ, ԵՄ և այլ): Բոլոր քաղաքական ուժերն իրենց նախընտրական ծրագրերում և քարոզարշավի ընթացքում անդրադառնում էին արցախյան խնդրին, և հենց այս համատեքստում էին դրսևորվում հիմնական տարբերությունները: Սակայն առավել ընդգծված տարբերությունը արցախյան խնդրի մասով ՀԱԿ-ի դիրքորոշումն էր, որն իր՝ «Խաղաղություն, հաշտություն, բարիդրացիություն» նախընտրական կարգախոսով արցախյան հարցում առաջ էր տանում բացառապես զիջողական մոտեցումը, ինչը վերջնականապես մերժվեց հայ հասարակության կողմից տվյալ ուժին տրված քվեների տեսքով: ՀԱԿ-ը չհաղթահարեց նախընտրական շեմը: Կարևոր է արձանագրել, որ ՀՀ քաղաքացին՝ ընտրողը, մերժեց արցախյան հարցում «զիջողական խոսույթը»: Սակայն, չնայած այն բանին, որ 2017թ. նախընտրական խոսույթն իր բնույթով կոնֆլիկտային էր, ինչն այդ շրջանում օրինաչափ է, քանի որ տարբեր քաղաքական ուժեր պայքարում են իշխանության համար, պետք է փաստել, որ այս անգամ ՀՀ-ում տեղի չունեցան հետընտրական մասշտաբային կոնֆլիկտային գործընթացներ՝ ցույցերի և հանրահավաքների տեսքով: Սա կարելի կլիներ համարել բացառապես դրական միտում, եթե, իհարկե, ընտրությունների ժամանակ կամ նախընտրական շրջանում բացառվեին տարատեսակ ընտրակեղծիքները: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հետընտրական շրջանում բողոքի մասշտաբային դրսևորումների բացակայության փաստը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից: Առաջին՝ իսկապես ընտրակեղծարարության արատավոր երևույթներն այս անգամ նվազել էին, և երկրորդ՝ քաղաքացիների զգալի մասը, մասնակից լինելով ընտրակեղծարարությանը (այսինքն՝ վերցնելով կաշառք), հետագայում զերծ մնաց բողոք և ընտրությունների արդյունքների

վերաբերյալ անհամաձայնություն հայտնելուց՝ այդպիսով իսկ լեգիտիմացնելով նախապես կեղծված քվեարկության արդյունքները: Երկրորդ դեպքում կարելի է միանշանակ պնդել հայ հասարակության մի զգալի հատվածի քաղաքական վարքագծում հպատակային քաղաքական մշակույթի առկայության մասին: Ֆորմալ առումով հաղթեց ՀՀԿ-ի՝ «Անվտանգություն և առաջընթաց» կարգախոսը: Եվ միաժամանակ փաստ է, որ 2017թ. խորհրդարանական ընտրություններից հետո զանգվածային բողոքի ակցիաներ ՀՀ-ում տեղի չունեցան:

Նոր ձևավորված խորհրդարանում ուժերի դասավորության արդյունքում կոնֆլիկտային քաղաքական խոսույթը շարունակվեց: Այս երևույթն առկա է խորհրդարանական մշակույթում, սակայն դրա կարևոր բաղկացուցիչը նաև կոնֆլիկտային խոսույթի կառուցողական բաղադրիչն է, երբ իշխանական և ընդդիմադիր ուժերին որոշ առանցքային հարցերում հաջողվում է հանգել կոնսենսուսի՝ համաձայնության խոսույթի: ՀՀ 6-րդ գումարման խորհրդարանում 2017թ. ընթացքում գերակշռում էր կոնֆլիկտային խոսույթը: Ընդդիմադիր հատվածին հաջողվում էր վերհանել իշխանության խոցելի կողմերը, ինչի արդյունքում քննադատական խոսույթը լայն տարածում էր գտել խորհրդարանում: Սակայն կոնֆլիկտային խոսույթին զուգահեռ նաև կարելի է արձանագրել համաձայնության խոսույթի դրսևորումներ ևս՝ պայմանավորված մեծամասամբ ԵՄ-ի հետ համաձայնագրի ստորագրմամբ, երբ խորհրդարանի իշխանական և ընդդիմադիր թևերի միջև նկատվեց կոնսենսուս: Սա, թերևս, կարելի է համարել հաջողված խոսութային փոխգործակցության օրինակ: Սակայն միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ հակադիր դիրքերում գտնվող իշխանական և ընդդիմադիր ուժերի միջև խոսույթը շարունակում է իր կոնֆլիկտային դրսևորումները ԵԱՏՄ-ի մասով, որը միանշանակ չի կարող արժանանալ ԵՄ-ի հետ ստորագրված համաձայնագրի ճակատագրին: Այսինքն՝ դեռևս չունենալով շոշափելի հաջողություններ և առաջընթաց, կյանքի որակի բարելավում ԵԱՏՄ շրջանակներում (ավելին՝ ունենալով դժվարություններ, եթե հարցին նայենք շարքային քաղաքացու աչքերով) պետք է փաստել, որ իշխանությունը ամեն կերպ արդարացնում է արտաքին ինտեգրման ընտրված ուղին և խոսում դրա շրջանակներում առաջիկա դրական ակնկալիքների մասին:

Հարկ է նշել, որ 2017թ. խոսույթի վերլուծության համատեքստում ուշագրավ էին նաև «Ազգ-բանակ» կոնցեպտի շրջանակներում տեղի ունեցած զարգացումները: Հիմնականում կոնցեպտը ունեցավ դրական ընկալում, սակայն որոշ վերապահումներով: Դրա տեսական նշանակության առումով քաղաքական խոսույթն ավելի շատ եղավ համաձայնության, սակայն կոնցեպտի գործնականացման առումով, երբ ԱԺ ներկայացվեց Զինապարտության մասին նոր օրինագիծ, որը նախատեսում էր տարկետման իրավունքի խիստ սահմանափակում կամ վերացում, քաղաքական խոսույթում սկսեց հետզհետե գերակայել կոնֆլիկտայնությունը: Ե՛վ խորհրդարանական

ու արտախորհրդարանական որոշ քաղաքական ուժերի (հիմնականում՝ ընդդիմադիր), և՛ հասարակական (հիմնականում՝ ուսանողության) շրջանում եղան դեմ կարծիքներ, բողոքներ, որոնք վերաճեցին նաև դասադուլի: Այս համատեքստում տեղի ունեցան նաև հակադիր դիրքորոշումների համաձայնեցման փորձեր, սակայն դրանք կարելի է համարել ձախողված, քանի որ բողոքող ուսանողների առանցքային պահանջները չբավարարվեցին: Հայաձայնեցման խոսույթի փորձերը չհանգեցրեցին համաձայնության, և վերջին հաշվով պահպանվեց կոնֆլիկտային խոսույթը, սակայն ավելի պասիվ դրսևորմամբ:

2017թ. եզրափակիչ քաղաքական շրջանի առանցքային խոսույթը, որը ամենայն հավանականությամբ պահպանելու է իր քաղաքական ինտրիգը մինչև 2018թ. ապրիլ, ՀՀ վարչապետի՝ որպես պետության առաջին դեմքի ընտրությանը վերաբերող խոսույթն է: Այս խոսույթն իր նշանակությամբ նման է նախընտրական խոսույթի՝ չնայած այն հանգամանքին, որ պաշտոնապես նախընտրական քարոզարշավ վարչապետի պաշտոնի համար լինել չի կարող: Սակայն դա չի բացառում քարոզչության դերը ապագա վարչապետի լեգիտիմացման գործում:

Վարչապետության հարցը որքան էլ, որ փորձ է արվում անորոշության, հանդարտության շրջանակներում պահել, միևնույն է արդեն ծավալել է համապատասխան խոսույթ և՛ իշխանական, և՛ ընդդիմադիր, և ՛հասարակական, և՛ լրատվական դաշտում: Իշխանության ներկայացուցիչները հիմնականում զուսպ, սակայն ակնարկում են վարչապետի՝ իրենց նախընտրելի թեկնածուի մասին: Փորձագետները, վերլուծաբաններն ավելի բաց են խոսում՝ հիմնականում նշելով, որ ամենահավանական թեկնածուն գործող նախագահն է, իսկ ընդդիմադիրները վարչապետի հարցին զուգահեռ շրջանառության մեջ են դնում նաև 2018թ. ապրիլին ՀՀ նախագահի պաշտոնում իրենց թեկնածուի առաջադրման խոսույթը:

Հատկանշական է նաև այն, որ վարչապետի հարցի մասին խոսեց նաև հանրապետության նախագահը, սակայն չասաց, թե ում է տեսնում այդ պաշտոնում՝ միևնույն ժամանակ չբացառելով նաև իրեն (ինչը բացառել էլ դեռ ավելի վաղ տված իր հարցազրույցներից մեկում): Այս հարցի շուրջ այսօր հանրապետությունում ձևավորվել է լատենտային խոսույթ, երբ տվյալ հարցը գաղտնիության քողով շղարշելով՝ այնուամենայնիվ հասկացնել են տալիս, թե ով պետք է լինի նոր վարչապետը, ինչը հասկանալի է դառնում շրջանառվող խոսույթի բովանդակային վերլուծության արդյունքում, որտեղ ինֆորմացիան թաքցված է ենթատեքստում:

Բացի ներքին քաղաքական զարգացումների խոսութային վերլուծությունից, որոշ արտաքին ազդակներ ևս կարող են կողմնորոշիչներ հանդիսանալ ՀՀ նոր վարչապետի պաշտոնում գործող նախագահ Ս. Սարգսյանի թեկնածությունը իշխող մեծամասնության կողմից առաջադրելու և ընտրելու հարցում: Եթե համեմատում ենք գործող վարչապետ Կ. Կարապետյանին և Ս. Սարգսյանին որպես քաղաքական

գործիչներ, ապա պարզ է դառնում, որ վերջինս ավելի մեծ ճանաչում և լեգիտիմություն ունի արտաքին աշխարհում և նաև փորձված է որպես քաղաքական գործիչ: Սակայն չմոռանանք, որ 2017թ. խորհրդարանական ընտրություններում ՀՀԿ-ի նախընտրական քարոզարշավի առաջին դեմքը Կ. Կարապետյանն էր (ՀՀԿ-ն իր ստացած քվեների համար պարտավոր է նաև Կ. Կարապետյանին): Հարցը դիտելով արտաքին քաղաքականության տիրույթում՝ հարկ է նշել, որ Ս. Սարգսյանը ստորագրեց նաև ԵՄ-ի հետ երկար սպասված համաձայնագիրը՝ դրանով իսկ ցույց տալով «և-և»-ի՝ փոխլրացման իր արտաքին քաղաքականությունը, որի միանշանակ արդյունավետության մասին խոսելը դեռ վաղ է: Անհրաժեշտ են վավերացումներ և քաղաքական կամք, ինչպես նաև քաղաքական շահ ԵՄ-ի հետ ստորագրված համաձայնագրի կյանքի կոչման համար: Միևնույն ժամանակ այս իրողությունը չի կարող դրականորեն չազդել գործող նախագահին որպես վարչապետ առաջադրելու հավանականության վրա: Դրան հավելենք նաև նախագահի՝ վերջերս տված հարցազրույցում և տարբեր ներպետական հանդիպումներում բարձրացված խնդիրները և դրանց լուծման հարցում վճռականությունը: Բայցև՝ այս ամենը նրա խոսույթում կարելի է դիտարկել նաև որպես «ոչ ֆորմալ քարոզարշավ», քանի որ փորձը ցույց է տալիս, որ նրա ոչ բոլոր խոստումներն են իրականություն դարձել: Ինչևէ՝ քաղաքականությունը նաև տեխնոլոգիաների գործադրման և հնարավորինի արվեստ է, որին հատուկ են ինչպես «շախմատային կոմբինացիաներ», այնպես էլ «թատերականացված բեմականացում»: Իսկ թե այս երկուսից ո՞րը կլինի առավել իրատեսական, ցույց կտա միայն ժամանակը:

Վարչապետության հարցում հարկ է հաշվի առնել նաև անուղղակի նշանակություն ունեցող այլ արտաքին հանգամանք ևս: Փաստ է այն, որ ԵԱՏՄ անդամ հինգ պետություններից երեքում՝ ՌԴ, Բելառուս, Ղազախստան, քաղաքական առաջնորդները, կարծես թե, «անփոխարինելի» են: Միայն Ղրղզստանում այս տարի տեղի ունեցած նախագահի ընտրություններում փոխվեց երկրի առաջնորդը: Նկատենք, որ եկող տարի ԵԱՏՄ-ի անդամ երկու պետություններում ևս պետք է որոշվի առաջնորդի հարցը՝ ՌԴ-ում և ՀՀ-ում: Անշուշտ, Վ. Պուտինի վերընտրությանը ՌԴ-ում կարող է խոչընդոտել միայն ֆորս մաժորային իրավիճակը, ինչը քիչ հավանական է: ՀՀ-ի դեպքում ևս՝ Ս. Սարգսյանի՝ ապագա վարչապետության մասին խոսույթը գնալով ավելի իրատեսական հիմքերի վրա է դրվում: Հետևապես՝ 2018 թ.-ին ԵԱՏՄ շրջանակներում ձևավորված «ավանդույթը» ամենայն հավանականության կպահպանվի, և «անփոխարինելի առաջնորդների» շարքում իրենց տեղը կվերգտնեն քաղաքական փորձության առջև կանգնած առաջնորդության այս երկու թեկնածուները: Այսպիսի քաղաքական սցենարը հնարավոր է նաև այն հիմնավորմամբ, որ ԵԱՏՄ անդամ պետությունների առաջնորդներն ունեն արդեն երկար տարիների համատեղ աշխատանքի փորձ:

Ամփոփելով քաղաքական խոսույթի վերլուծությունը՝ կարելի է նշել, որ 2017թ. ՀՀ ներքաղաքական խոսույթում գերակշռել են կոնֆլիկտային դրսևորումները, սակայն եղել է նաև համաձայնության դրսևորում: Իսկ 2018թ. քաղաքական տարվա առաջին փուլում շրջանառվելիք քաղաքական խոսույթում գլխավոր տեղը զբաղեցնելու է վարչապետի ընտրության հարցը, որի նախադրյալներն արդեն իսկ սահմանվել են 2017թ. քաղաքական տարվա վերջնափուլում: Մինչ այժմ շրջանառվող քաղաքական խոսույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ վարչապետի ամենահավանական թեկնածուն կլինի գործող նախագահ Ս. Սարգսյանը: Չմոռանանք, որ նոր Սահմանադրությամբ ՀՀ քաղաքացիները համապետական ընտրությանը մասնակցելու իրավունք ունեն միայն հինգ տարին մեկ անգամ (ԱԺ ընտրություն): Քաղաքացիների մասնակցությունը և ազդեցությունը վարչապետի ընտրության հարցում որևէ լեգալ քաղաքական մեխանիզմով ապահովված չէ: Որոշում կայացնողը լինելու է խորհրդարանական մեծամասնությունը: Հետևապես՝ վարչապետի ընտրության գործում վճռորոշ լինելու է հենց խորհրդարանական մեծամասնության խոսույթը:

Էմիլ Օրդուխանյան
քաղ.գիտ. թեկնածու, դոցենտ